ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 755 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 792-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 792-Ն որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված և շարունակվող ժամկետային աշխատանքային պայմանագրերը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխվում կամ լուծվում են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 23-ից՝ բացառությամբ սույն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով նախատեսված

էլեկտրոնային եղանակով ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ կարգավորումից, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում, փոփոխվում կամ լուծվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ